| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 937-Ն | *Տեսակը* | Այլ |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2005.07.22/47(419) Հոդ.910 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 07.07.2005 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ Վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 09.07.2005 |
| *Վավերացնող մարմինը* | ՀՀ Նախագահ | *Վավերացման ամսաթիվը* | 13.07.2005 |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 01.08.2005 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

| Կատարել է փոփոխություններ հետևյալ փաստաթղթերում՝ | Յուրաքանչյուր փոփոխվողին համապատասխանող ինկորպորացիան՝ |
|---|---|
| Կառավ,11.09.2003,N 1298-Ն | Կառավ,11.09.2003,N 1298-Ն |
| Կառավ,27.11.2003,N 1549-Ն | Կառավ,27.11.2003,N 1549-Ն |

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1298-Ն ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 1549-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ.Քոչարյան
*13 հուլիսի 2005 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2005 թվականի N 937-Ն

## ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1298-Ն ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 1549-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության արխիվային գործի բնագավառում կառավարումն իրականացնող լիազորված պետական կառավարման մարմնի իրավասությունները վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1298-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ կետում՝

ա) «դ», «ե», «ժզ» ենթակետերից հանել «, արխիվային» բառը.

բ) «թ» ենթակետից հանել «և արխիվներում» բառերը.

գ) «ժ» ենթակետից հանել «, արխիվներում» և «, արխիվային փաստաթղթերին ու արխիվային ֆոնդերին» բառերը.

դ) ուժը կորցրած ճանաչել «զ», «է» և «ը» ենթակետերը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի, արխիվային գործի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառում կառավարումն իրականացնող լիազորված մարմնի

իրավասություններ վերապահելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի ապրիլի 6-ի N 229 ու 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1112 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1549-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) որոշման վերնագրից և 1-ին կետից հանել «արխիվային գործի» բառերը.

բ) որոշման նախաբանից հանել «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ,» բառերը:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Մարգարյան**

2005 թ. հուլիսի 9
Երևան